ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017 թվականի N 48-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.2017 թվականի նոյեմբերի 5-ին կայանալիք Չարենցավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների տեղամասային կենտրոնը սահմանել «Ալափարսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքում, որը գտնվում է գյուղ Ալափարս, 8-րդ փողոց, N 2/1 հասցեում:

2.Տեղամասային կենտրոն սահմանելու մասին տեղեկացնել լիազոր մարմնին, թիվ 27 տարածքային ընտրական հանձնաժողովին և «Ալափարսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 19
գ.Ալափարս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2017 թվականի N 49-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հողամասը օտարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ***որոշում եմ***.

1.Կատարել համայնքային սեփականություն հանդիսացող «Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր» նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասի իրավունքի պետական գրանցում:

2.Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 19
գ.Ալափարս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2017 թվականի N 50-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Անահիտ Արմենի Թովմասյանին տալ 07-008-0031-0014 կադաստրային ծածկագրով հողամասի վրա հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման շինարարության թույլտվություն:

2.Պարտավորեցնել քաղաքացի Անահիտ Արմենի Թովմասյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 20
գ.Ալափարս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2017 թվականի N 51-Ա

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայանալիք Չարենցավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցող թեկնածուներին քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1)Երջանկության փողոց, N 18 հասցեում գտնվող մշակույթի տան ճակատային մասը, յուրաքանչյուր քարոզչություն կատարողին՝ 1 քառակուսի մետր մակերեսով.

2)5-րդ փողոց, N 1 հասցեում գտնվող ավտոկանգառի շինության պատը, յուրաքանչյուր քարոզչություն կատարողին՝ 0.5 քառակուսի մետր մակերեսով:

2.Սույն որոշման հսկաղությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Վարդգես Հարությունյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 22
գ.Ալափարս